ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 258-Ա **17 հուլիսի 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻՄԱՐԶԻ 100% ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <ժբ> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 և 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշումների պահանջները

Որոշում եմ՝

1. Հաստատել՝

1)Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական ընկերությունների 2022 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով 2023 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 2022 թ-ի տարեկան շահութաբաժինների վճարման չափի վերաբերյալ առաջարկությունները՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հանձնարարել՝

1) Հավելվածում ընդգրկված մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ շահութաբաժինների գումարները սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 2023 թվականի հոկտեմբերի 1-ը փոխանցել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200440 հաշվին.

2) մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ (պետ՝ Յու.Մուշեղյան) մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով 2023 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի և զուտ շահույթի բաշխման ուղղությունների նախահաշիվների վերաբերյալ ընդհանուր ժողովի

որոշման քաղվածքը 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ռուբիկ Նավոյանին:

17.07.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Ք. Գավառ
2023թ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թվականի հուլիսի 17-ի
N 258-Ա որոշման

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կառավարմանը վերապահված առևտրային կազմակերպությունների 2022թ. գործունեության արդյունքներով ՀՀ 2023թ. Պետական բյուջե տարեկան շահութաբաժիններ վճարելու առաջարկությունների մասին

(համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարության հետ)

Հ/Հ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի համակարգի կազմակերպության անվանումը	ՀՀ 2023թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարն՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ	1,435,000.00
2	«Ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ	644,500.00
3	«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ	10,302,400.00
4	«Մարտունու ծննդատուն» ՓԲԸ	1,613,500.00
5	«Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	216,100.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	14,211,500.00

17.07.2023

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ • ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ • 08428824 • «ՈՐՈՒՄՈՒՆՈՎ»

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ